



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի Մ Ա Ր Ձ Պ Ե Տ

<< ----->> << ----->> 2020թ.

N -----

<<Դու մենակ չես>> հակակոռուպցիոն
իրավապաշտպան հասարակական կազմակերպության
նախագահ՝ Ա.Նիկողոսյանին

Ի պատասխան Ձեր 2020 թվականի մայիսի 25-ի N 05/18 հարցման տեղեկացվում է, որ Արմավիրի մարզի գրությամբ ներկայացված բուժհաստատությունների տնօրենների ընտրության մրցութային բոլոր փաստաթղթերի, ինչպես նաև զարգացման ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը ենթակա է մերժման՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի և <<Անձնական տվյալների պաշտպանության մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 4-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան:

Առողջապահական կազմակերպությունների տնօրենների աշխատանքային պայմանագրերին ծանոթանալու կապակցությամբ տեղեկացնում ենք, որ առողջապահական պետական փակ բաժնետիրական և փակ բաժնետիրական ընկերությունների տնօրենների մրցույթների արդյունքում նշանակումները կատարվում են համապատասխան մարզպետի որոշումներով, որոնք հրապարակված են ՀՀ Արմավիրի մարզպետարանի պաշտոնական կայքէջում <http://armavir.mtad.am/> հղմամբ:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Սարգսրապատի և Փարաքարի բժշկական ամբուլատորիաները համայնքային ենթակայության ՀՈԱԿ-ներ են, և անհրաժեշտ փաստաթղթեր ձեռք բերելու համար կարող եք դիմել համապատասխան համայնքապետարաններ:

Հարգանքով
Մարզպետ՝

Հ. Մաթևոսյան

04.06.2020

VERIFIED OCSP 04.06.2020 11:58:36 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Կատարող՝ Հ.Հարությունյան
Ն. Մարտիրոսյան
Հեռ. 0237/21629